ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԴԻ ԷԼ ԷՖ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերը կիսում են առագաստանավային սպորտի հեռանկարային զարգացման նշանակությունը,

Ձգտելով զարգացնել համագործակցությունը առագաստանավային սպորտի որակյալ մասնագետների պատրաստման, մարզաձևի մասսայականացման, երիտասարդության դաստիարակման ուղղությամբ:

Ընդունելով մարզաձևի մասսայականացման միջոցով առագաստանավային սպորտի որակյալ մասնագետների պատրաստման հնարավորությունը,

Կարևորելով առագաստանավային սպորտի նկատմամբ ուսանողների հետաքրքրության բարձրացումը, ինչպես նաև դրա իրականացման համար գրավիչ պայմանների ստեղծումը,

Ընդգծելով կողմերի փոխադարձ պատրաստակամությունը՝ կրթական և մարզական միջոցառումների իրականացման միջոցով համատեղ ջանքերով զարգացնել ուսանողական սպորտը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության ուղղությունները

Սույն հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) և «ԴԻ ԷԼ ԷՖ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատրաստակամ են.

1.1. պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք թույլ կտան զարգացնել առագաստանավային սպորտը, դրա տարածվածությանը և մարզաձևի կարևորությանը վերաբերող ոչ միայն ուսանողության, այլև բնակչության լայն շրջանում:

1.2. փոխադարձ աջակցություն ցուցաբերել մարզական, կրթամարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում:

1.3. ուսանողների մասնակցության ակտիվության խթանման նպատակով կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ, ստեղծել մասնակցային նպաստավոր պայմաններ:

1.4. Մարզական ուղղություն՝

1"4"1"Հիմնել առագաստանավային սպորտի դասընթացներ՝ ներգրավելով Ինստիտուտի ուսանողներին:

1"4"2" Կազմակերպել համատեղ մարզական միջոցառումներ, առաջնություններ և ցուցադրություններ:

1"4"3" Ներգրավել փորձագետներ՝ բարձրակարգ մարզումների իրականացման համար:

1.4.4. Սահմանել հատուկ (զեղչային) պայմաններ Ընկերության կողմից կազմակերպվող մարզական միջոցառումներին Ինստիտուտի ուսանողների մասնակցության համար:

1.5. Կրթական ուղղություն՝

1"5"1 Մշակել ծրագրեր առագաստանավային սպորտ կրթական ուղղություններում:

1"5"2"Կազմակերպել ուսանողների համար վարպետության դասեր և սեմինարներ:

1"5"3" Ներգրավել Ընկերության մասնագետներին՝ ուսումնական ծրագրերում դասավանդելու համար:

1.6. Հետազոտական ուղղություն՝

1"6"1" Իրականացնել համատեղ գիտական հետազոտություններ՝ ուղղված առագաստանավային սպորտի զարգացմանը և ուսանողական սպորտի առաջխաղացմանը:

1"6"2"Հրատարակել համատեղ գիտական նյութեր և ուսումնասիրություններ:

1.7. Հանրային իրազեկություն և նորարարական ծրագրեր՝

1"7"1" Կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ՝ նվիրված առագաստանավային սպորտի մասին իրազեկվածության լբարձրացմանը:

1.7.2. Ստեղծել և տարածել հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված տեղեկատվական նյութեր:

1"7"3" Համագործակցել նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ:

1"8" Կողմերը երկուստեք պատրաստակամ են նաև՝

1.8..1. համագործակցել Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում:
1.8.2. համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական ծրագրերի մշակման և իրականացման շուրջ:
1.8.3. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ:
1.8.4. ներգրավել Ֆեդերացիային Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման

աշխատանքներում:
1.8.5. սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համագործակցել Կողմերի տարածքների, գույքի օգտագործման շուրջ:

2. Համագործակցության նպատակները

2.1. Նպաստել առագաստանավային սպորտի մասսայականացմանը և նոր սերնդի մարզիկների պատրաստմանը,
2.2. Զարգացնել ուսանողական սպորտը և առագաստասպորտային մշակույթի մասին հանրային իրազեկվածության մակարդակի աճը:
2.3. Ապահովել գիտական, կրթական և սպորտային ոլորտների արդյունավետ համատեղումը:
2.4. Ստեղծել և իրականացնել համատեղ ծրագրեր, որոնք կնպաստեն սպորտի ոլորտի նորարարություններին:

3. Համագործակցության ուղղությունները

3.1. Ինստիտուտը պարտավորվում է.

3"1"1"Ներգրավել ուսանողներին համատեղ ծրագրերում:

3"1"2" Սահմանել կրթական ծրագրեր, որոնք կներառեն առագաստանավային սպորտի և մարզաձևի այլ բաղադրիչներ:

3.2. Ընկերությունը պարտավորվում է.

3"2"1"Տրամադրել առագաստանավային սպորտի փորձագետներ և տեխնիկական աջակցություն:

3"2"2" Ներկայացնել սեփական տարածքներ և միջոցներ համատեղ միջոցառումների կազմակերպման համար՝ յուրաքանչյուր միջոցառման համար կնքելով հավելյալ համաձայնագիր:

4. Համագործակցության սկզբունքներ

Կողմերը Հուշագրով նախատեսված գործողությունները կիրականացնեն օրինականության, փոխադարձ հարգանքի, վստահության և թափանցիկության սկզբունքներով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար, այլ հիմնվում է փոխադարձ համաձայնության վրա:
5.2. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել հուշագրի գործողությունը՝ մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:
5.3. Սույն հուշագիրը կնքվում է երեք օրինակից՝ հայերեն լեզվով, և երեք օրինակներն ունեն հավասար իրավաբանական ուժ:

5.4. Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

5.5.Հետագա համագործակցությունը կարգավորվելու է Կողմերի միջև կնքվող առանձին պայմանագրերով:

5.6. Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. մայիսի 5-ին:

5.7. Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

6" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Ընկերություն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	**«ԴԻ ԷԼ ԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ ք. Երևան, Չարենցի 1, 210 սենյակ
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	հիմնադիր՝ Արտաշես Դադայան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.